



**«Նոր ժամանակի կրթությո՞ւն» ՀԿ**

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ**

**Հետազոտության թեման՝ Պրոբլեմային ուսուցման  
մեթոդաբանությունը և կիրառումը առարկայի դասավանդման  
գործընթացում  
Առարկան՝ Ռուսաց լեզու**

**Հետազոտող ուսուցիչ՝ Լիդիյա Գրիգորյան**

**Ուսումնական հաստատություն՝ Հակոբի հիմնական դպրոց**

**Երևան 2022**

## Բովանդակություն

Ներածություն-----	3
Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը և կիրառումը առարկայի դասավանդման գործընթացում-----	4
Եզրակացություն-----	19
Օգտագործված գրականության ցանկ-----	20

## Ներածություն

**Թեմայի արդիականությունը:** 20-րդ դարի կեսերին մանկավարժ գիտնականները և հոգեբանները հայտնագործեցին ուսուցման գործընթացի կազմակերպման դիդակտիկական, նոր համակարգեր, որոնք ընձեռեցին երեխաների ինքնուրույնությունն ու ստեղծագործական ընդունակությունները զարգացնելու հնարավորություն: Այդ նոր համակարգերի շարքին է դասվում պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան: Վերջինս կազմակերպված ուսուցման գործընթաց է, որի ընթացքում առաջադրվում են ուսումնական պրոբլեմներ, ստեղծում պրոբլեմային իրավիճակներ երեխաներին, ինքնուրույնության պայմաններում լուծվում ուսումնական պրոբլեմները, հաղթահարվում պրոբլեմային իրավիճակները: Այսպիսի ուսուցումը բացառում է պատրաստի գիտելիքները, հմտություններն ու կարողությունները: Պրոբլեմային ուսուցման միջոցով ձեռք բերված գիտելիքները յուրացվում են հիմնավորապես, վերածվում համոզմունքների: Հետևապես պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան նաև աշխարհայացք ձևավորող ուսուցում է, քանի որ առանց համոզմունքի չկա և չի կարող լինել աշխարհայացք:

«Պրոբլեմ» բառն ունի հիմնական ծագում, որ նշանակում է խնդիր, բառացիորեն՝ առաջ նետված ինչ-որ բան: Այդ իմաստով պրոբլեմը տեսական ու գործնական բարդ հարց է, որը պահանջում է լուծում:

**Նպատակ՝** ուսումնասիրել պրոբլեմային ուսուցման փուլերը, մակարդակները:

**Իմ առջև դրվեցին հետևյալ խնդիրները՝**

1. Ներկայացնել պրոբլեմային ուսուցման հիմնախնդիրները:
2. Վերլուծել պրոբլեմային ուսուցման էությունը:
3. Պրոբլեմային ուսուցման փուլերը, մակարդակները:

## **Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը և կիրառումը առարկայի դասավանդման գործընթացում**

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի առաջին սաղմերը կան դեռևս հին հունական մանկավարժության մեջ: Օրինակ, Սոկրատեսը կիրառում էր ուսուցման օգտակար շատ եղանակներ: Կազմակերպում էր զրույցներ, որոնց ընթացքում գործադրվում էին «սոկրատեսյան ինդուկցիա» և «սոկրատեսյան հետևանք» մեթոդները: Վերջիններիս ժամանակ սովորողը մտածում էր ինքնուրույնաբար, նա էր լուծում առաջադրված խնդիրը, ըմբռնում երևույթը, փաստը, առանձնացնում դրանց էական կողմերն ու հասկանիշները, կատարում վերլուծություններ ու համադրություններ, հաղթահարում ստեղծված պրոբլեմային իրավիճակները, հանգում վերջնական եզրակացության: Սակայն սոկրատեսյան մեթոդները լայն տարածում չգտան:

Դեռ ավելին, միջնադարյան կղերականության պայմաններում, երբ քանականությունը վերագրվում էր համաշխարհային ոգուն, երբ լճացում էր ապրում գիտությունը, ուսուցման առաջավոր շատ եղանակներ ու մեթոդներ մոռացության տրվեցին և լայն տարածում ստացան ուսուցման դոգմատիկ մեթոդները:

Հասարակության զարգացման ներկա փուլում, երբ բուռն թափով զարգանում են գիտությունն ու տեխնիկան, մշակույթը, արվեստը, խնդիր է դրվում աճեցնել համակողմանի զարգացած, որոնող, ինքնուրույնաբար մտածող ու դատող սերունդ: Այս իմաստով էլ պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան իր ուրույն տեղն է գրավում արդի կրթական համակարգում: Վերջինս հիմնավորվում է պրոբլեմային ուսուցմանը հատուկ առավելություններով: Դրանք են.

1. պրոբլեմային ուսուցումը <<հայտնագործող>> ուսուցում է: Ինչպես Մ.Ն.Սկատկինն է ասում՝ այն նախապատրաստական փուլ է, որը հնարավորություն է ընձեռում ըմբռնել հասկացությունները, առաջ է բերում քանակական և որակական փոփոխություններ, զարգացման էվոլյուցիոն և թռիչքային փուլեր,

2. պրոբլեմային ուսուցումը հնարավորություն է ընձեռում մտածել սրամաքանված, զարգացնում է ակտիվ, ինքնուրույն և ստեղծագործական մտածողությունը,

3. պրոբլեմային ուսուցումը սովորեցնում է մտածել գիտականորեն: Անհայտը որոնելիս, ստեղծված պրոբլեմային իրավիճակները հաղթահարելիս երեխաներն ստիպված վեր են լուծում երևույթը, փաստը, իրադարձությունը, հայտնագործում պատճառահետևանքային կապեր, հասկացությունների հատկությունների հարաբերություններ, ծագումնաբանական, նյութական, միջառարկայական կապեր,

4. պրոբլեմային ուսուցման յուրացրած նյութը դարձնում է ապացուցելի և ոչ մի կասկած չի հարուցում նրա ճշտության մասին,

5. պրոբլեմայնությունն ուսուցման գործընթացը դարձնում է հուզական: Հայտնի է, որ հետաքրքրական ու արդյունավետ է այն ուսուցումը, որն առաջացնում է դրական հույզեր, հարուցում մտավոր խոր զգացումներ: Պրոբլեմային ուսուցման ընթացքում յուրացումը երեխաների համար դառնում է ցանկալի, բերկրալի երևույթ: Ստացված գիտելիքը վեր է ածվում համոզմունքի, քանի որ յուրացման հիմքում ընկած է որոնողական աշխատանքը: Երեխան մեծ բավականություն է զգում այն բանից, որ ինքնուրույնաբար լուծել է խնդիրը <<հայտնագործել>>նոր գիտելիք: Մշտապես որոնելը, փնտրելը, գտնելը նրա համար դառնում են դաստիարակչական ուղիներ՝ հետագայում ստեղծագործական գործունեությունը ձևավորելու համար,

6. պրոբլեմային ուսուցումը միջառարկայական կապեր հայտնագործելու, դրանցից օգտվելու լավագույն միջոց է: Ուսումնական պրոբլեմը (բացի հիմնական պրոբլեմից) ներառում է նաև ենթապրոբլեմներ, վերջիններս էլ՝ իրենց առանձին տարրերը, ապա դրանք բոլորը, բացի իրենց ներքին կապերից, ունեն արտաքին կապեր,

7. պրոբլեմային ուսուցման միջոցով յուրացրած գիտելիքները երկար ժամանակ մտապահվում են այն պատճառով, որ գիտելիքն ինքը՝ սուբյեկտն է «հայտնագործում»: Ինչպես հայտնի է, ինքնուրույնաբար ձեռք բերված

ճշմարտությունները երկար ժամանակ չեն մոռացվում, իսկ մոռանալու դեպքում էլ բավական է մի փոքր հիշեցում, և դրանք անմիջապես վերականգնվում են:

Վ. Օկոնն իրավիճակ է համարում այն փաստը, որն իր վրա է հրավիրում սուբյեկտի ուշադրությունը: Նրա կարծիքով որքան որոշակի ձև ընդունի իրավիճակը, այնքան հնարավոր կլինի առավելագույն չափով ակտիվացնել երեխաներին, նրանց մասնակից դարձնել պրոբլեմի լուծմանը:

«Իրավիճակ» բառը ծագում է լատիներեն «սիտուս» բառից, որը նշանակում է դրություն, իրադրություն, պայմանների և կացությունների զուգակցում, որն ստեղծում է որոշակի իրադրություն, դրություն: Պարզ է դառնում, որ իրավիճակի էությունը դժվար կացության հատուցումն է: Դժվարությունն այն էլակետն է, որից սկսում են ձևավորվել վարկածները, մտքերը: Վերջիններս իրենց հերթին ծնում են նոր մտքեր, որոնք անկասկած, սուբյեկտի պրակտիկ գործունեության արդյունք են: Հենց սուբյեկտի այդպիսի գործունեության ընթացքում էլ լուծվում է պրոբլեմը, հաղթահարվում իրավիճակը:

Ստեղծված պրոբլեմային իրավիճակը հաղթահարվում է նախկինում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների ու կարողությունների, դրանք նոր պայմաններում գործադրելու և փոխանցելու, գործողության նոր եղանակներ ընտրելու, նոր գիտելիքներ հայտնագործելու հիման վրա: Իրար հետ շաղկապված այսպիսի գործողությունները զարգացնում ու ձևավորում են երեխաների ճանաչողական գործունեությունը:

Իրավիճակն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթ: Երբ առկա է դժվարությունը (օբյեկտիվ է), այն գործող սուբյեկտի համար է (սուբյեկտիվ է): Ուրեմն՝ սուբյեկտից դուրս չկա և չի կարող լինել պրոբլեմային իրավիճակ: Քանի որ վերջինն կապված է նրա մտածողության հետ, ապա այն նաև տրամաբանական, հոգեբանական իրավիճակ է: Այդ է ենթադրում նրա հոգեբանական կառուցվածքը: Ա.Մ. Մատյուշկինը գտնում է, որ պրոբլեմային իրավիճակի հոգեբանական կառուցվածքում կարելի է մտցնել երեք բաղադրամաս:

1. Ճանաչողական պահանջմունքն, որն արթնացնում է մարդու ինտելեկտուալ գործունեությունը,

2. անհայտ գիտելիքին կամ գործողության եղանակներին հասնելու ձգտումը,

3. ինտելեկտուալ հնարավորությունները, որոնք ներառում են նրա ստեղծագործական ընդունակությունները և անցյալի փորձը:

Այստեղից կարելի է ենթադրել, որ պրոբլեմային իրավիճակը երեխաների հետաքրքրությունները շարժող հիմնական գործոնն է, նոր մտքերի իսկական զարթեցուցիչը:

Բնական է, երբ սուբյեկտին առաջադրվում է խնդիրը, ապա նա մտածում է գտնել գործողության նոր եղանակները, համախմբում է իր ունեցած գիտելիքը, հմտություններն ու կարողությունները: Այս ամենը նրան հարկադրում է ստեղծված դժվար կացությունը: ՌԻստի իզուր չէ Ս.Լ. Ռուբիշտեյնն ասում, որ մտածողության գործընթացի սկիզբը համարվում է պրոբլեմային իրավիճակի ծագումը: [17, էջ 17]

Հարկ է տարբերել «պրոբլեմային խնդիր» և «պրոբլեմային իրավիճակ» հասկացությունները, քանի որ դրանց միջև կան էական, սկզբունքային տարբերություններ: Ա.Մ. Մատյուշկինը հանգամանորեն վերլուծելով պրոբլեմային իրավիճակի հոգբանական կառուցվածքը և «պրոբլեմային իրավիճակ» ու «խնդիր» հասկացությունների տարբերությունները, գրում է որ «խնդիրը» ներառում է հարցը, գործողության նպատակը և գործողության պայմանները, մինչ դեռ «պրոբլեմային իրավիճակ» որոշվում է խնդրի լուծման ժամանակ սուբյեկտի հոգեվիճակով: Այսինքն՝ պրոբլեմային իրավիճակն ունի սուբյեկտիվ և օբյեկտիվ փոխգործողության հատուկ տեսք: Հետևաբար, պրոբլեմային իրավիճակի ծագման պայմանը գործողության հատկությունների ու եղանակների նոր հարաբերությունների բացահայտման անհրաժեշտությունն է: Հարկ է նշել, որ ոչ բոլոր հարցերը կամ խնդիրները չեն, որ կարող են առաջացնել պրոբլեմային իրավիճակներ: Ռենե Դեկարտն իր՝ «Ռիդեղի կառավարման մասին» դրույթներում գրել է, որ նախ բոլոր հարցերն անհրաժեշտաբար պետք է պարունակեն մի շարք անհայտներ, այլապես տրված հարցերն անօգտակար են, երկրորդ՝ հարցերն ինչ-որ չափով պետք է

յուրահատուկ լինեն, այլապես ոչ մի բան մեզ չի տանի դեպի հետազոտություն, երրորդ՝ հարցերում պետք է նշվեն նաև հայտնիները: Այդպիսի պահանջները հաստատում են ժամանակակից մանկավարժական, հոգեբանական գիտությունները:

## **Պրոբլեմային ուսուցման փուլերը, մակարդակները**

Պրոբլեմային իրավիճակը բարդ կատեգորիա է: Ուստի պատահական չէ, որ այն երբեմն ընդունում է շղթայական տեսք: Նրա մի մասը հաղթահարելուց հետո հանդես է գալիս նրա մյուս, բոլորովին նոր շղթան և սուբյեկտի համար ստեղծում հոգեկան դժվար կացություն: Այստեղ կարևորվում է պրոբլեմային առաջադրանքների շերտավորումը (հեշտ, բարդ, դժվար) և դրանք առաջադրել մտավոր տարբեր կարողություններ, ընդունակություններ ունեցող երեխաների:

Ըստ Ա.Մ.Մատյուշկինի, պրոբլեմային իրավիճակներ ստեղծելու ժամանակ պետք է ելնել հետևյալ կանոններից.

1. Երեխաների առջև դնել այնպիսի գործնական կամ տեսական խնդիրներ, որոնց լուծման ժամանակ նրանք հայտնագործեն յուրացման ենթակա նոր գիտելիքը կամ գործողությունները:

2. Երեխաներին առաջադրվող պրոբլեմային խնդիրը պետք է համապատասխանի նրանց ինտելեկտուալ հնարավորություններին: Ըստ որում, դժվարության մակարդակը պետք է գնահատվի երկու ցուցանիշով.

- նյութի նորության մակարդակով
- նրա ընդհանրացման մակարդակով

3. Պրոբլեմային խնդիրը պետք է նախորդի յուրացմանը ենթակա նյութի բացահայտմանը:

4. Իբրև պրոբլեմային խնդիրներ կարող են ծառայել հարցերը, գործնական խնդիրները և այլն:



5. Միևնույն պրոբլեմային իրավիճակը կարող է ստեղծել տարբեր խնդիրներից:

6. Ծագած պրոբլեմային իրավիճակը պետք է ձևակերպի ուսուցիչը՝ մատնացույց անելով խնդիրները չկատարելու պատճառները:

Ա.Մ. Մատյուշկինը ձևակերպել է նաև պրոբլեմային իրավիճակներում ուսուցման գործընթացի կառավարման հետևյալ կանոնները.

1. Նյութի պարզաբանմանը պետք է հետևի պրոբլեմային իրավիճակի առաջացումը և համապատասխանի երեխայի ճանաչողական պահանջմունքներին:

2. Ուսուցչի կողմից հաղորդումները՝ պրոբլեմային իրավիճակները հաղթահարելիս տարբեր աստիճանի կարող են լինել. մի դեպքում միայն մասնակի հուշումներ, մյուս դեպքում՝ օգնություն երեխաներին՝ ձևակերպելու օրինաչափություններ, նոր պայմաններում գործողություններ կատարելու համար և այլն: Այս ամենը կախում ունեն երեխաների պատրաստվածությունից:

3. Երեխաները պետք է օգտագործեն ստացած տեղեկությունները կամ պահանջվող գործողության եղանակները՝ սկզբում տրված առաջադրանքները լուծելու համար:

4. Առաջադրված խնդիրը երեխաներին կարելի է տալ մասնակի պրոբլեմների ձևով: Այլ կերպ ասած, մեկ պրոբլեմային առաջադրանք կարելի է տալ երկու կամ երեք պրոբլեմային խնդիրների ձևով:

Ա.Մ. Մատյուշկինը կարևորելով պրոբլեմային իրավիճակների հաջորդականությունը՝ ձևակերպել է դրանք որոշելու կանոնները:

Դրանք են.

1. որպեսզի ապահովվի պրոբլեմային ուսուցման սկզբունքը, անհրաժեշտ է ստեղծել պրոբլեմային իրավիճակների հաջորդական համակարգեր: Հարկավոր է դրանք նախատեսել նախօրոք.

2. Մշակված պրոբլեմային առաջադրանքների համակարգը, որն առաջացնում է պրոբլեմային իրավիճակներ, պետք է ամբողջությամբ ընդգրկի այս կամ այն

ուսումնասիրվող թեման: Պրոբլեմային իրավիճակների համակարգը հետևողականորեն պետք է զարգացնի երեխաների գործողության եղանակները և գիտելիքը:

3. Պրոբլեմային իրավիճակների համակարգը գիտելիքի յուրացման գործում կատարում է տարբեր դիդակտիկական գործառույթ: Առաջին՝ պրոբլեմային իրավիճակը երեխաների մեջ առաջացնում է ճանաչողական պահանջմունք: Երկրորդ՝ պրոբլեմային իրավիճակների համակարգի ամբողջությունը բացահայտում է հիմնական առաջադրանքի էությունը:

4. Պրոբլեմային իրավիճակները յուրացման գործընթացում պետք է կազմեն երեխաների հաջորդական քայլերը: Վերջիններս կախում ունեն նրանց ինտելեկտուալ կարողություններից:

5. Պրոբլեմային իրավիճակները մշակելու ժամանակ սկզբում անհրաժեշտ է առանձնացնել յուրացման ենթակա գիտելիքները և գործողությունները, որոշել նրանց համակարգը: Այնուհետև պետք է մշակել պրոբլեմային համակարգի առաջադրանքները, որոնք ապահովում են պրոբլեմային իրավիճակների ծագումը:

Հանրահայտ ճշմարտություն է, որ պրոբլեմային իրավիճակը կլանում է երեխայի հոգեկան աշխարհը, նրա համար ստեղծում լարված պահ, նա շատ դժվարությամբ է կողմնորոշվում դեպի իր գիտելիքը, համախմբում դրանք՝ նոր պայմաններում օգտագործելու, գործողության նոր եղանակներ որոնելու համար: Նրա մտավոր գործողությունների կարգավորիչի գործակիցը պրոբլեմային իրավիճակ ստեղծելու պահին շատ փոքր է լինում: Եթե դրան ավելանում է նաև երեխայի վատ տրամադրությունը, ապա պատկերը պարզ կլինի. նրա մեջ չեն արթնանա դեպի պրոբլեմային իրավիճակի հաղթահարումն ունեցած հետաքրքրությունները, ներքին պահանջմունքները, ձգտողականությունը: Նա անգամ իսկ չի ցանկանա գիտակցել պրոբլեմային իրավիճակը, նրա հարուցած դժվարությունները: Ուրեմն, երեխայի խաղաղ հոգեկան աշխարհը, բարձր տրամադրությունը պրոբլեմային իրավիճակները հաղթահարելու համար և գլխավոր պայման են, և՛ հիմնական երաշխիք: Այստեղից կարևորվում է այն փաստը, որ թե՞ ուսուցիչը, թե՞ երեխան պետք է խուսափեն այն երևույթներից, որոնք կարող են ավելոծել նրանց ներաշխարհը: Պետք է կարողանալ

կառավարել նաև սեփական անձը: Նման դեպքերում ուսուցիչը պետք է ցուցաբերի արիություն, համառ ու տոկուն կամք և դա երեխաների համար դարձնի դրական օրինակ: Մանկավարժը չպետք է մոռանա, որ ինքն երեխաների հոգիների կանթեղը վառող անմար կրակն է, լուսատու աստղը, նրանց գերագույն դաստիարակը: «Մանկավարժի ներգործության էությունը,- գրում է Վ. Օկոնը,- անձնավորության վրա նրանում է, որ այն նրան օբյեկտ լինելուց վեր է ածում սուբյեկտի: Դաստիարակության մեջ գտնվող երեխան ապրում է, մտածում, ցանկանում, գործում, ունենալով իր իդեալները, կյանքի նպատակները, որոնք և կարող են զարգանալ ոչ այն ուղղությամբ, որը նշել է դաստիարակողը: Դաստիարակության ներկայիս արվեստն այն բանի մեջ է, թե ինչպես ազդել այդ իդեալների ու նպատակների վրա, ինչպես նաև մոտիվների վրա, որպեսզի դաստիարակվողը գնա այն ուղիով, որ ցույց է տալիս իմաստուն, փորձված դաստիարակը, որպեսզի միաժամանակ աշխատի իր մտավոր դաստիարակության վրա, իր սեփական մոտիվների կատարելագործման վրա»:

Կարևոր է նաև պրոբլեմային իրավիճակների դասակարգման հարցը: Ա.Մ.Մատյուշկինը առաջադրել է պրոբլեմային իրավիճակի հիմնական դասերի շատ հետաքրքրական եռաչափ մոդելը՝ դժվարության ծագում, գործողության դժվարություն և գենետիկական դժվարություն:

Նշված երեք տեսակների համար Ա.Մ.Մատյուշկինը հիմք է ընդունել կապի երեք ձև.

1. կապը գործողության հիմնական տարրերի միջև
2. կապը ձևավորված է գործողությունների միջև
3. կապը երեխայի ստեղծագործական հնարավորությունների միջև:

Ըստ Ա.Մ.Մատյուշկինի գենետիկական դժվարությամբ կարելի է բնութագրել պրոբլեմային իրավիճակների տիպերը, որոշել գործողության մակարդակների զարգացումը, այն մակարդակների, որոնք համապատասխանում են հոգեկան կարգավորիչի մակարդակներին և որոնք ներառում են ուղղակի հակադարձ կապեր:

Դժվարության ծագումը կարող է բնութագրել պրոբլեմային իրավիճակների սիպերը՝ վաղուց յուրացված և յուրացման ենթակա գիտելիքների անհամաձայնության մեջ՝ կախված սուբյեկտի ստեղծագործական ընդունակություններից: Հասարակության զարգացման ներկա փուլում, երբ բուռն թափով զարգանում են գիտությունն ու տեխնիկան, մշակույթը արվեստը, խնդիր է դրվում աճեցնել համակողմանի զարգացած, որոնող, ինքնուրույնաբար մտածող ու դատող սերունդ: Այս իմաստով էլ պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան իր ուրույն տեղն է գրավում արդի կրթական համակարգում: Վերջինս հիմնավորվում է պրոբլեմային ուսուցմանը հատուկ առավելություններով: Դրանք են.

1. պրոբլեմային ուսուցումը <<հայտնագործող>> ուսուցում է: Ինչպես Մ.Ն.Սկատկինն է ասում՝ այն նախապատրաստական փուլ է, որը հնարավորություն է ընձեռում ըմբռնել հասկացությունները, առաջ է բերում քանակական և որակական փոփոխություններ, զարգացման էվոյուցիոն և թռիչքային փուլեր,

2. պրոբլեմային ուսուցումը հնարավորություն է ընձեռում մտածել տրամաբանված, զարգացնում է ակտիվ, ինքնուրույն և ստեղծագործական մտածողությունը,

3. պրոբլեմային ուսուցումը սովորեցնում է մտածել գիտականորեն: Անհայտը որոնելիս, ստեղծված պրոբլեմային իրավիճակները հաղթահարելիս երեխաներն ստիպված վեր են լուծում երևույթը, փաստը, իրադարձությունը, հայտնագործում պատճառահետևանքային կապեր, հասկացությունների հատկությունների հարաբերություններ, ծագումնաբանական, նյութական, միջառարկայական կապեր,

4. պրոբլեմային ուսուցման յուրացրած նյութը դարձնում է ապացուցելի և ոչ մի կասկած չի հարուցում նրա ճշտության մասին,

5. պրոբլեմայնությունն ուսուցման գործընթացը դարձնում է հուզական: Հայտնի է, որ հետաքրքրական ու արդյունավետ է այն ուսուցումը, որն առաջացնում է դրական հույզեր, հարուցում մտավոր խոր զգացումներ: Պրոբլեմային ուսուցման ընթացքում յուրացումը երեխաների համար դառնում է ցանկալի, բերկրալի երևույթ: Ստացված գիտելիքը վեր է ածվում համոզմունքի, քանի որ յուրացման հիմքում

ընկած է որոնողական աշխատանքը: Երեխան մեծ բավականություն է զգում այն բանից, որ ինքնուրույնաբար լուծել է խնդիրը <<հայտնագործել>>նոր գիտելիք: Մծտապեսորոնելը, փնտրելը, գտնելը նրա համար դառնում են դաստիարակչական ուղիներ՝ հետագայում ստեղծագործական գործունեությունը ձևավորելու համար,

6. պրոբլեմային ուսուցումը միջառարկայական կապեր հայտնագործելու, դրանցից օգտվելու լավագույն միջոց է: Ուսումնական պրոբլեմը (բացի հիմնական պրոբլեմից) ներառում է նաև ենթապրոբլեմներ, վերջիններս էլ՝ իրենց առանձին տարրերը, ապա դրանք բոլորը, բացի իրենց ներքին կապերից, ունեն արտաքին կապեր,

7. պրոբլեմային ուսուցման միջոցով յուրացրած գիտելիքները երկար ժամանակ մտապահվում են այն պատճառով, որ գիտելիքն ինքը՝ սուբյեկտն է «հայտնագործում»: Ինչպես հայտնի է, ինքնուրույնաբար ձեռք բերված ճշմարտությունները երկար ժամանակ չեն մոռացվում, իսկ մոռանալու դեպքում էլ բավական է մի փոքր հիշեցում և, դրանք անմիջապես վերականգնվում են:

Վ. Օկոնն իրավիճակ է համարում այն փաստը, որն իր վրա է հրավիրում սուբյեկտի ուշադրությունը: Նրա կարծիքով որքան որոշակի ձև ընդունի իրավիճակը, այնքան հնարավոր կլինի առավելագույն չափով ակտիվացնել երեխաներին, նրանց մասնակից դարձնել պրոբլեմի լուծմանը:

«Իրավիճակ» բառը ծագում է լատիներեն «սիտուս» բառից, որը նշանակում է դրություն, իրադրություն, պայմանների և կացությունների, զուգակցում, որն ստեղծում է որոշակի իրադրություն, դրություն: Պարզ է դառնում, որ իրավիճակի էությունը դժվար կացության հատուցումն է: Դժվարությունն այն ելակետն է, որից սկսում են ձևավորվել վարկածները, մտքերը: Վերջիններս իրենց հերթին ծնում են նոր մտքեր, որոնք անկասկած, սուբյեկտի պրակտիկ գործունեության արդյունք են: Հենց սուբյեկտի այդպիսի գործունեության ընթացքում էլ լուծվում է պրոբլեմը, հաղթահարվում իրավիճակը:

Ստեղծված պրոբլեմային իրավիճակը հաղթահարվում է նախկինում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների ու կարողությունների, դրանք նոր պայմաններում

գործադրելու և փոխանցելու, գործողության նոր եղանակներ ընտրելու, նոր գիտելիքներ հայտնագործելու հիման վրա: Իրար հետ շաղկապված այսպիսի գործողությունները զարգացնում ու ձևավորում են երեխաների ճանաչողական գործունեությունը:

Իրավիճակն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթ: Երբ առկա է դժվարությունը (օբյեկտիվ է), այն գործող սուբյեկտի համար է (սուբյեկտիվ է): Ուրեմն՝ սուբյեկտից դուրս չկա և չի կարող լինել պրոբլեմային իրավիճակ: Քանի որ վերջինն կապված է նրա մտածողության հետ, ապա այն նաև տրամաբանական, հոգեբանական իրավիճակ է: Այդ է ենթադրում նրա հոգեբանական կառուցվածքը: Ա.Մ. Մատյուշկինը գտնում է, որ պրոբլեմային իրավիճակի հոգեբանական կառուցվածքում կարելի է մտցնել երեք բաղադրամաս:

1. Ճանաչողական պահանջմունքն, որն արթնացնում է մարդու ինտելեկտուալ գործունեությունը,
2. անհայտ գիտելիքին կամ գործողության եղանակներին հասնելու ձգտումը,
3. ինտելեկտուալ հնարավորությունները, որոնք ներառում են նրա ստեղծագործական ընդունակությունները և անցյալի փորձը:

Այստեղից կարելի է ենթադրել, որ պրոբլեմային իրավիճակը երեխաների հետաքրքրությունները շարժող հիմնական գործոնն է, նոր մտքերի իսկական զարթեցուցիչը:

Բնական է, երբ սուբյեկտին առաջադրվում է խնդիրը, ապա նա մտածում է գտնել գործողության նոր եղանակները, համախմբում է իր ունեցած գիտելիքը, հմտություններն ու կարողությունները: Այս ամենը նրան հարկադրում է ստեղծված դժվար կացությունը: ՌԻստի իզուր չէ Ս.Լ. Ռուբիշտեյնն ասում, որ մտածողության գործընթացի սկիզբը համարվում է պրոբլեմային իրավիճակի ծագումը: [17, էջ 17]

Հարկ է տարբերել «պրոբլեմային խնդիր» և «պրոբլեմային իրավիճակ» հասկացությունները, քանի որ դրանց միջև կան էական, սկզբունքային տարբերություններ: Ա.Մ. Մատյուշկինը հանգամանորեն վերլուծելով պրոբլեմային

իրավիճակի հոգեբանական կառուցվածքը և «պրոբլեմային իրավիճակ» ու «խնդիր» հասկացությունների տարբերությունները, գրում է որ «խնդիրը» ներառում է հարցը, գործողության նպատակը և գործողության պայմանները, մինչ դեռ «պրոբլեմային իրավիճակ» որոշվում է խնդրի լուծման ժամանակ սուբյեկտի հոգեվիճակով: Այսինքն՝ պրոբլեմային իրավիճակն ունի սուբյեկտիվ և օբյեկտիվ փոխգործողության հատուկ տեսք: Հետևաբար, պրոբլեմային իրավիճակի ծագման պայմանը գործողության հատկությունների ու եղանակների նոր հարաբերությունների բացահայտման անհրաժեշտությունն է: Հարկ է նշել, որ ոչ բոլոր հարցերը կամ խնդիրները չեն, որ կարող են առաջացնել պրոբլեմային իրավիճակներ: Ռենե Դեկարտն իր՝ ուղեղի կառավարման մասին դրոյթներում գրել է, որ նախ բոլոր հարցերն անհրաժեշտաբար պետք է պարունակեն մի շարք անհայտներ, այլապես տրված հարցերն անօգտակար են, երկրորդ՝ հարցերն ինչ-որ չափով պետք է յուրահատուկ լինեն, այլապես ոչ մի բան մեզ չի տանի դեպի հետազոտություն, երրորդ՝ հարցերում պետք է նշվեն նաև հայտնիները: Այդպիսի պահանջները հաստատում են ժամանակակից մանկավարժական, հոգեբանական գիտությունները:

Պրոբլեմային իրավիճակը բարդ կատեգորիա է: Ուստի պատահական չէ, որ այն երբեմն ընդունում է շղթայական տեսք: Նրա մի մասը հաղթահարելուց հետո հանդես է գալիս նրա մյուս, բոլորովին նոր շղթան և սուբյեկտի համար ստեղծում հոգեկան դժվար կացություն: Այստեղ կարևորվում է պրոբլեմային առաջադրանքների շերտավորումը (հեշտ, բարդ, դժվար) և դրանք առաջադրել մտավոր տարբեր կարողություններ, ընդունակություններ ունեցող երեխաների:

Հանրահայտ ճշմարտություն է, որ պրոբլեմային իրավիճակը կլանում է երեխայի հոգեկան աշխարհը, նրա համար ստեղծում լարված պահ, նա շատ դժվարությամբ է կողմնորոշվում դեպի իր գիտելիքը, համախմբում դրանք՝ նոր պայմաններում օգտագործելու, գործողության նոր եղանակներ որոնելու համար: Նրա մտավոր գործողությունների կարգավորիչի գործակիցը պրոբլեմային իրավիճակ ստեղծելու պահին շատ փոքր է լինում: Եթե դրան ավելանում է նաև երեխայի վատ տրամադրությունը, ապա պատկերը պարզ կլինի. նրա մեջ չեն արթնանա դեպի պրոբլեմային իրավիճակի հաղթահարումն ունեցած հետաքրքրությունները, ներքին

պահանջմունքները, ձգտողականությունը: Նա անգամ իսկ չի ցանկանա գիտակցել պրոբլեմային իրավիճակը, նրա հարուցած դժվարությունները: Ուրեմն, երեխայի խաղաղ հոգեկան աշխարհը, բարձր տրամադրությունը պրոբլեմային իրավիճակները հաղթահարելու համար և գլխավոր պայման են, և՞ հիմնական երաշխիք: Այստեղից կարևորվում է այն փաստը, որ թե՞ դաստիարակը, թե՞ երեխան պետք է խուսափեն այն երևույթներից, որոնք կարող են ալեկոծել նրանց ներաշխարհը: Պետք է կարողանալ կառավարել նաև սեփական անձը: Նման դեպքերում դաստիարակը պետք է ցուցաբերի արիություն, համառ ու տոկուն կամք և դա երեխաների համար դարձնի դրական օրինակ: Մանկավարժը չպետք է մոռանա, որ ինքն երեխաների հոգիների կանթեղը վառող անմար կրակն է, լուսատու աստղը, նրանց գերագույն դաստիարակը: «Մանկավարժի ներգործության էությունը,- գրում է Վ. Օկոնը,- անձնավորության վրա նրանում է, որ այն նրան օբյեկտ լինելուց վեր է ածում սուբյեկտի: Դաստիարակության մեջ գտնվող երեխան ապրում է, մտածում, ցանկանում, գործում, ունենալով իր իդեալները, կյանքի նպատակները, որոնք և կարող են զարգանալ ոչ այն ուղղությամբ, որը նշել է դաստիարակողը: Դաստիարակության ներկայիս արվեստն այն բանի մեջ է, թե ինչպես ազդել այդ իդեալների ու նպատակների վրա, իչպես նաև մոտիվների վրա, որպեսզի դաստիարակվողը գնա այն ուղիով, որ ցույց է տալիս իմաստուն, փորձված դաստիարակը, որպեսզի միաժամանակ աշխատի իր մտավոր դաստիարակության վրա, իր սեփական մոտիվների կատարելագործման վրա»:

Այսօր տարրական ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաների շարքում կարևորվում են ուսումնամեթոդական համալիրի կատարելագործման, ուսուցման գործընթացի տարամակարդակ իրականացման, տեխնոլոգիականացման կարողությունները: Պրակտիկան ցույց է տալիս, որ որևէ ուսումնական առարկայի բովանդակության փոփոխումը դեռևս չի ենթադրում ուսուցման արդյունքների դրական տեղաշարժ. անհրաժեշտ են տեխնոլոգիական, մեթոդական նոր մոտեցումներ և նորամուծություններ:

Հայտնի մանկավարժական տեխնոլոգիաներից «Ռուսաց լեզու» ինտեգրված առարկայի դասավանդման գործընթացում նպատակային է պրոբլեմային ուսուցման



տեխնոլոգիայի կիրառումը: Այս տեխնոլոգիայի առավելությունը պայմանավորված է կրտսեր դպրոցականների դրդապատճառային, ճանաչողական ոլորտի, տրամաբանական մտածողության զարգացմամբ, ինչը հնարավոր է իրականացնել դասի ընթացքում ծագած պրոբլեմային իրավիճակների, առաջացած հակասությունների լուծման գործընթացում:

Պրոբլեմային ուսուցման գաղափորը նոր չէ, մանկավարժական գիտության զարգացման տարբեր փուլերում այդ հիմնահարցին անդրադարձել են Յան Ամոս Կոմենսկին, Ժան Ժակ Ռուսոն, Իոհան Պեստալոցցին, Ադոլֆ Դիստերվեզը, Կ. Դ. Ուշինսկին, Ջ. Դյուին, Ջ. Բրուները, Յու. Ա. Ամիրջանյանը, Ս. Պ. Մանուկյանը, Լ. Ս. Սահակյանը, Հ. Մ. Մելիքյանը և այլք:

Արտերկրի մանկավարժության մեջ պրոբլեմային ուսուցման հայեցակարգի զարգացման գործում իր ուրույն ներդրումն ունի ամերիկացի հոգեբան, մանկավարժ Ջոն Դյուին: Ուսումնական խնդիրների, իրավիճակների լուծման գործուիմ Ջոն Դյուին մերժում էր ավանդական քարացած ուսուցումը՝ նախապատվությունը տալով սովորողների ակտիվ ինքնուրույն պրակտիկ գործունեությանը: Ջ. Դյուին առաջարկում էր ուսուցման բոլոր տեսակները և ձևերը փոխարինել սովորողների ինքնուրույն աշխատանքով: Պրագմատիզմի հիմնադիրը քննադատում էր իր ժամանակի դպրոցները. «բոլորը հարմարված են լսելու, քիչ է երեխայի ինքնուրույն աշխատանքը, կիրառվող մեթոդները միանման են»: Նրա կարծիքով մտածողության զարգացումն է, որ բերում է առաջադրված խնդրի լուծմանը:

Ամերիկացի հոգեբան Ջ. Բրուները, զարգացնելով պրոբլեմային ուսուցման տեսության գաղափարները, առաջարկում է ուշադրություն դարձնել մի շարք հարցերի, մասնավորապես գիտելիքների կառուցվածքին, սովորողի պատրաստակամությանը, տրամաբանական մտածողությանը, ժամանակակից հասարակության մեջ ուսուցման դրդապատճառայնությանը:

20-րդ դարի կեսերից սկսած՝ պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան քննարկել են Մ. Ա. Դանիլովը, Վ. Պեսիպովը, Մ. Ի. Մախմուտովը, Ա. Մ. Մատուշկինը, Ի. Յա. Լերները և այլք: Դիտարկելով այն փաստը, որ պրոբլեմային ուսուցումն

ակտիվացնում է ուսուցման գործընթացը, նրանք առաջադրել են պրոբլեմային ուսուցման կազմակերպման մի քանի դրույթներ, որոնցում կարևորվում են՝

ինքնուրույն եզրահանգումներ անելը, ոչ թե պատրաստի հասկացությունների, սահմանումների հաղորդումը,

սովորողների ծանոթացումը գիտության մեթոդական համակարգին,

ստեղծագործական առաջադրանքների միջոցով ինքնուրույն մտքեր, եզրահանգումներ արտահայտելու կարողությունների զարգացումը:

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան բնույթով զարգացնող է և համադրում է սովորողների համակարգված ինքնուրույն-որոնողական գործունեությունը նոր գիտելիքների ձեռքբերման և հնի համալրման հետ:

Պրոբլեմի առաջադրումը, քննարկումը, լուծումը մտածողության ինտեգրալ հատկություն է, որի հիմքում ընկած են տարբեր գործողություններ և որոշակի ժամանակահատված: «Ռուսաց լեզու» առարկայի դասագործընթացում պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է ոչ միայն կրտսեր դպրոցականների ճանաչողության ակտիվացմանը, այլև որոշում է նրանց տարածական, տրամաբանական, մտածողության, ստեղծագործական ընդունակությունների, հետազոտական կարողությունների և նախասիրությունների զարգացման ուղղությունը: Պրոբլեմային իրավիճակի կարևոր բնութագրիչը ճանաչողական խնդրի առկայությունն է. ցանկացած հարց, խնդիր նկամ հասկացություն դեռևս չի խոսում պրոբլեմային իրավիճակի առկայության մասին. կան հարցեր, որոնց պատասխանները սովորողներին հայտնի են և որոնողական, վերլուծական տարրեր չեն պարունակում:

Ուսումնական խնդիրների լուծումը, բնականաբար, դրական ազդեցություն ունի սովորողների հուզական ոլորտի վրա, իսկ հաղորդակցական կարողությունների, անհատականության, ստեղծագործական, տրամաբանական մտածողության ձևավորման համար ստեղծվում են բարենպաստ պայմաններ: Սակայն, երբ կրտսեր դպրոցականը փորձում է տեսնել, հասկանալ խնդիրը, հարցեր է տալիս, կարծիք

հայտնում, դիտում, դասակարգում, ապացուցում և պնդում իր տեսանկյունը, ապա կարող ենք վստահաբար խոսել դրական վերջնարդյունքների մասին:

«Ռուսաց լեզու» առարկայի դասագործընթացում պրոբլեմային դասի նախագծումը ենթադրում է փուլայնություն՝ պրոբլեմային իրավիճակի ստեղծում, ուսումնական խնդրի առաջադրում, լուծման եղանակների որոնում, եզրահանգումներ և արդյունքների ներկայացում, գնահատում:

### **Եզրակացություն**

Պրոբլեմային է կոչվում այն ուսուցումը, որի ընթացքում աշակերտները, ուսուցչի ղեկավարությամբ, իրենց ունեցած գիտելիքների հիման վրա լուծում են պրոբլեմային խնդիրներ, հաղթահարում պրոբլեմային իրավիճակներ, որոնում գործողության նոր եղանակներ, կարգավորում ու կողմնորոշում իրենց գործունեությունը, գործադրում պրոբլեմային շարադրանքի, մասնակի որոնողական կամ էվրիստիկական, հետազոտական մեթոդներ, ինքնուրույնաբար ձևակերպում իրենց մտահանգումներն ու եզրահանգումները, հասնում վերջնական նպատակին:

Պրոբլեմային ուսուցման գերագույն նպատակը սովորողների տրամաբանական մտածողության ու ստեղծագործական գործունեության զարգացումն է, որը կարելի է իրականացնել պրոբլեմային խնդիրներ լուծելու, պրոբլեմային իրավիճակներ հաղթահարելու միջոցով: Ուստի իզուր չեն հոգեբաններն ասում՝ պրոբլեմի օրինաչափությունները նաև մտածողության զարգացման օրինաչափություններ են և հակառակը:

Պրոբլեմային ուսուցման էությունը պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է, որն արթնացնում ու ակտիվացնում է սովորողների մտածական գործունեությունը: Այն ընձեռում է ստեղծված իրավիճակը գիտակցելու, առաջադրված խնդրում եղած հակասությունները հայտնաբերելու, անհայտը որոնելու, ունեցած գիտելիքները փորձարկելու, վարկածներ առաջ քաշելու, գործողության նոր եղանակներ

հայտնաբերելու, պրոբլեմը լուծելու, իրավիճակը հաղթահարելու, վերջնական նպատակի հասնելու հնարավորություն: Պրոբլեմային ուսուցման հիմնական հասկացություններից են՝ ուսումնական պրոբլեմը, պրոբլեմային հարցը և պրոբլեմային իրավիճակը:

Վերջին երեք տասնամյակում մեր հասարակությունը սոցիալ-տնտեսական ու քաղաքական մեծ առաջընթաց ապրեց: Առաջընթաց ապրեցին նաև բոլոր գիտությունները: Բարեփոխվեցին հասարակություն-դպրոց, գիտություն-դպրոց հարաբերությունները: Առկա դարձան դրանց՝ իրար ներկայացվող պահանջների անհամապատասխանությունները: Անհրաժեշտ էր բարեփոխել կրթության բովանդակությունը, կատարելագործել ուսուցման մեթոդները:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Վ.Օկոն «Պրոբլեմային ուսուցման մեթոդներ»
2. Մ.Ն.Սկատսկի «Պրոբլեմային ուսուցման մեթոդներ»  
«Ուսուցման արդյունավետության բարձրացման ուղիների մասին»
3. Ռ.Դեկարտ «Ուղեղի կառավարման մասին»